



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2019



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
1. Ու՞մ կողմից է իրականացվում գազամատակարարումը	8
2. Ինչպե՞ս կարող է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության բաժանորդը ստանալ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները	8
3. Արդյոք «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունն ունի բաժանորդի հարցերին պատասխանելու պարտականություն	9
4. Ի՞նչ պետք է բովանդակի գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու դիմումը	9
5. Ի՞նչ ժամկետներում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը դիմող անձին ներկայացնում պայմանագիր կնքելու առաջարկը.....	10
6. Որո՞նք են «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության պարտականությունները նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու դիմումը ստանալու դեպքում	11
7. Ե՞րբ է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը սկսում բնակչության գազամատակարարումը	13
8. Որտե՞ղ է տեղադրվում առևտրային հաշվառքի սարքը.....	13
9. Ու՞մ կողմից են կատարվում առևտրային հաշվառքի սարքի տեղադրման, փոխարինման և շահագործման ծախսերը	14
10. Ո՞րն է առևտրային հաշվառքի սարքի ապահովաքակցման կարգը	14
11. Ի՞նչ իրավունքներ ունի բաժանորդն առևտրային հաշվառքի սարքի ապահովաքակցման ժամանակ	15

12. Ու՞մ կողմից են կատարվում առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման հետ կապված ծախսերը	16
13. Ո՞րն է բաժանորդի սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք մուտք գործելու կարգը	16
14. Ո՞ր դեպքում մատակարարն իրավունք ունի ընդհատել կամ դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը	17
15. Ո՞րն է մատակարարված գազի հաշվառման և վճարման կարգը: Ի՞նչ պարտականություններ ունեն մատակարարը և բաժանորդը	19
16. Որո՞նք են գազամատակարարման ընդհատման պայմանները	21
17. Ի՞նչ պարտականություն ունի բաժանորդը գազասպառման համակարգ ներառող տարածքը վարձակալության հանձնելու, վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում	21
18. Ի՞նչ իրավունքներ ունի մատակարարը բաժանորդի կողմից վճարում չկատարելու դեպքում	22
19. Ի՞նչ պարտականություններ ունի «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը բաժանորդի կողմից պարտքի վճարում կատարելու դեպքում	23
20. Ի՞նչ արտոնություններ են սահմանված մատակարարված գազի դիմաց վարձավճարի համար	23
21. Ի՞նչ անել, երբ համաձայն չեք «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության ներկայացրած վճարման հաշիվների հետ	24
22. Ի՞նչ անել, երբ առևտրային հաշվառքի սարքի աշխատանքը թվում է կասկածելի	25

23. Ինչպե՞ս բողոքարկել «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության գործողությունները25

24. Ո՞ր դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանը կքննարկի հարցը և ո՞վ կարող է դիմել Պաշտպանին.....26

Ներածություն

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 191-րդ հոդվածն առաջին անգամ ամրագրեց Մարդու իրավունքների պաշտպանի նոր գործառույթը՝ հետևելու կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, այդ ոլորտում խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, նպաստելու նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը: Այս նոր սահմանադրական գործառույթի հիմքում է յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձի սահմանադրական բացարձակ իրավունքը ստանալու Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը նշված հարցերով (Սահմանադրության 52-րդ հոդված):

Սահմանադրական այս լուծումները մանրամասն կարգավորում ստացան «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում: Մասնավորապես՝ սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածը սահմանեց, որ Պաշտպանը բողոքի առկայության դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ քննարկում է հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը, եթե տեղեկություն կա մարդու իրավունքների կամ ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի հանրային նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք չեն կարող ինքնուրույն օգտագործել իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավական միջոցները:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանրային ծառայությունների ոլորտն իր մեջ ներառում է՝

1) էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրահանրատիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը.

2) ջրային ոլորտը.

3) հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառը.

4) փոստային կապի բնագավառը.

5) երկաթուղային տրանսպորտի բնագավառը՝ ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանության, օգտագործման վճարի հաշվարկի իրականացման և օգտագործման վճարի հաստատման մասով.

6) տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառ՝ միայն սակագների մասով:

Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է սպառողների և էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության ապահովումը և շահերի հավասարակշռումը:

Հայաստանի Հանրապետությունում գազամատակարարումն իրականացվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից:

Սույն ոլեցույցը մշակվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից և վերաբերում է միայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ոլորտում կողմերի իրավունքներին և պարտականություններին:

Ուղեցույցը կազմվել է՝ հիմք ընդունելով Պաշտպանի աշխատակազմի դիտարկումների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված դիմումների և բողոքների ուսումնասիրության արդյունքները: Ուղեցույցի նպատակն է բարձրացնել սպառողների իրազեկվածության մակարդակը գազամատակարարման բնագավառում:

Ուղեցույցը չի հավակնում տրամադրել այս ոլորտում առաջ եկող հարցերի պատասխանները: Դրանում փորձ է արվել ներառել այն հարցերի պատասխանները, որոնք դիմողներն առավել հաճախ են բարձրացնում Պաշտպանին հասցեագրվող իրենց դիմումներում ու բողոքներում: Հարցերի պատասխանները կազմելիս հիմք են ընդունվել էներգետիկայի բնագավառի իրավական ակտերի կարգավորումները:

1. Ու՛մ կողմից է իրականացվում գազամատակարարումը

«Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը¹ պարտավոր է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել բնական գազի պահանջարկ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպության, որը մատակարարի հետ կնքել է բնական գազի մատակարարման պայմանագիր², հուսալի, անխափան և անվտանգ գազամատակարարում, առաքման կետում ապահովել պայմանագրում նշված գազի որակական ցուցանիշները և գազի ճնշումը՝ ստանդարտներով սահմանված թույլատրելի տիրույթում:

2. Ինչպե՛ս կարող է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության բաժանորդը ստանալ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները

«Գազպրոմ Արմենիա» ընկերությունից պահանջվող տեղեկատվությունը ստանալու համար անհրաժեշտ է՝

1) զանգահարել «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության թեժ գծի +374 10 29-49-04 հեռախոսահամարին.

2) հարցեր «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանն ուղղել էլեկտրոնային փոստի միջոցով inbox@gazpromarmenia.am

3) այցելել «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության գրասենյակներ.

4) դիմել «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը.

5) «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության պաշտոնական կայքէջն է <http://armenia-am.gazprom.com>:

¹ Այսուհետ նաև՝ մատակարար:

² Այսուհետ նաև՝ բաժանորդ:

Մատակարարը պարտավոր է ունենալ մշտական գործող հեռախոսակապով շուրջօրյա վթարային-կարգավարական ծառայություն՝ վթարային կանչերը, դրանց արձագանքելու ժամանակը և կատարված աշխատանքները համապատասխան գրանցամատյաններում գրանցելու և վթարները վերացնելու համար: Շուրջօրյա վթարային-կարգավարական ծառայության համարն է 1-04:

3. Արդյոք «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունն ունի բաժանորդի հարցերին պատասխանելու պարտականություն

«Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է ընդունել գրավոր կամ էլեկտրոնային եղանակով կամ շուրջօրյա հեռախոսակապի միջոցով ներկայացված դիմումները և բաժանորդի դիմումին պատասխանել այն եղանակով, ինչ եղանակով ստացել է՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի N 95-Ն որոշմամբ³ այլ ժամկետ սահմանված չէ:

4. Ի՞նչ պետք է բովանդակի գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու դիմումը

Գազասպառման նոր համակարգը գազամատակարարման ցանցին միացվում է դիմող անձի դիմումի հիման վրա:

³ Այսուհետ նաև՝ Կանոններ:

Գազասպատման նոր համակարգը գազամատակարարման ցանցին միացման դիմումը պետք է բովանդակվի՝

1) ֆիզիկական անձանց դեպքում՝ դիմող անձի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթղթի տվյալները, գազասպատման համակարգի տեղակայման վայրը, դիմող անձի բնակության հասցեն (ծանուցման հասցեն), հեռախոսահամարը, դիմումով ներկայացվող պահանջը, դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի ներկայացման ամսաթիվը, դիմող անձի ստորագրությունը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ նաև հարկ վճարողի հաշվառման համարը.

2) իրավաբանական անձի դեպքում՝ դիմող անձի անվանումը, գտնվելու վայրը (ծանուցման հասցեն), իրավաբանական անձի ներկայացուցչի անունը, ազգանունը, գազասպատման համակարգի տեղակայման վայրը, հեռախոսահամարը, հարկ վճարողի հաշվառման համարը, դիմումով ներկայացվող պահանջը, դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի ներկայացման ամսաթիվը, դիմող անձի ներկայացուցչի ստորագրությունը:

5. Ի՞նչ ժամկետներում է «Գազայրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը դիմող անձին ներկայացնում պայմանագիր կնքելու առաջարկը

Գազասպատման նոր համակարգը գազամատակարարման ցանցին միացման պայմանագիրը և վճարի 80%-ի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը Կանոնների համաձայն մատակարարին ներկայացման օրվանից մինչև դիմող անձին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝

1) 30 աշխատանքային օրը, եթե դիմող անձը բնակիչ կամ կենցաղային սպառում ունեցող կազմակերպություն է.

2) 90 աշխատանքային օրը, եթե դիմող անձը ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպություն է.

3) 120 աշխատանքային օրը, եթե դիմող անձը նոր կառուցվող բազմաբնակարան շենքի կամ թաղամասի կառուցապատող է: Մատակարարի և դիմող անձի փոխադարձ համաձայնությամբ միացման պայմանագրում կարող է սահմանվել դիմող անձին Պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու այլ ժամկետ:

Դիմող անձի կողմից վերը նշված փաստաթղթերը չներկայացնելու կամ դիմող անձի նոր գազասպառման համակարգի կառուցումը ավարտված չլինելու դեպքում մատակարարը պայմանագիր չի կնքում և չի սկսում դիմող անձի գազամատակարարումը:

6. Որո՞նք են «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության պարտականությունները նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու դիմումը ստանալու դեպքում

Մատակարարը, նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու դիմումը ստանալու դեպքում, սահմանված ժամկետներում (15 աշխատանքային օրում, եթե դիմող անձը բնակիչ կամ կենցաղային սպառում ունեցող կազմակերպություն է, 20 աշխատանքային օրում, եթե դիմող անձը ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպություն է, 30 աշխատանքային օրում, եթե դիմող անձը նոր կառուցվող շենքի կամ թաղամասի կառուցապատող է)՝

1) մշակում է տեխնիկական պայմանները՝ ըստ գազասպառման համակարգի առավելագույն սպառման ծավալների՝ էլնելով գազամատակարարման ցանցի թողունակության, գազամատակարարման հուսալիության, այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը չխախտելու և դիմող անձի նոր գազասպառման համակարգի միացման համար անհրաժեշտ՝ գազամատակարարման ցանցի ընդլայնման աշխատանքները նվազագույն ծախսումներով իրականացնելու պայմաններից: Տեխնիկական պայմանները համաձայնեցվում են դիմող անձի հետ: Առևտրային հաշվառքի սարքի (հանգույցի) տեղակայման վայրն ընտրվում է Կանոններին համապատասխան: Առևտրային հաշվառքի սարքի տեղակայման վայրի կամ տեխնիկական պայմանների ապահովման համար հողատարածքի գնման, վարձակալության կամ հողատարածքից սահմանափակ օգտվելու իրավունք (սերվիտուտ) ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում համապատասխան ծախսերը կատարում է դիմող անձը՝ առանց փոխհատուցման պահանջի: Այն դեպքում, երբ որպես առևտրային հաշվառքի սարքի (հանգույցի) տեղակայման վայր ընտրվել է դիմող անձի տիրապետման ներքո գտնվող տարածքը, դիմող անձը պարտավոր է ապահովել մատակարարի ներկայացուցչի անխոչընդոտ մուտքը նշված տարածք:

2) դիմող անձին է ներկայացնում միացման պայմանագիր կնքելու առաջարկություն՝ վերջինիս ուղարկելով իր ստորագրությամբ միացման պայմանագիրը՝ երկու օրինակից:

Բնակիչների և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների յուրաքանչյուր գազասպառման համակարգի՝ միացումը գազամատակարարման համակարգին պետք է իրականացվի մեկ միացման կետից:

Բազմաբնակարան շենքից դուրս գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգի՝ գազամատակարարման ցանցին միացման կետերի քանակը որոշվում է մատակարարի կողմից տրամադրված տեխնիկական պայմանների համաձայն:

7. Ե՞րբ է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը սկսում բնակչության գազամատակարարումը

Մատակարարը սկսում է բնակչության գազամատակարարումը հետևյալ պայմանների դեպքում՝

1) մատակարարը փորձարկել է ներտնային համակարգը և ստուգել նրա համապատասխանությունը նախագծին.

2) ընդունող հանձնաժողովը կազմել է ներտնային համակարգի շահագործման ընդունման ակտը.

3) միացման պայմանագրի բոլոր պայմանները կատարվել են.

4) գազասպառման համակարգի թողարկումից առաջ և պայմանագրով սահմանված կարգով մատակարարը հրահանգավորել է բաժանորդին (վարձակալին, փաստացի օգտագործողին) գազի սարքերի անվտանգ շահագործման կանոնների պահպանման մասին.

5) մատակարարը բաժանորդի հետ կնքել է պայմանագիր:

8. Որտե՞ղ է տեղադրվում առևտրային հաշվառքի սարքը

Բազմաբնակարան շենքերում բնակիչների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղադրվում են նրանց բնակարաններից դուրս:

Առանձնատների և կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղադրվում են նրանց սեփականության տարածքից դուրս:

Ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների առևտրային հաշվառքի սարքերի տեղադրման կետը սահմանվում է միացման պայմանագրով, որը ամրագրվում է նաև գազամատակարարման պայմանագրում:

9. Ու՞մ կողմից են կատարվում առևտրային հաշվառքի սարքի տեղադրման, փոխարինման և շահագործման ծախսերը

Առևտրային հաշվառքի սարքի տեղադրման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, հերթական ստուգաչափման և նորոգման) ծախսերը՝ անկախ դրա պատկանելությունից, իսկ բնակչության դեպքում՝ նաև առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման ծախսերը կրում է մատակարարը:

10. Ո՞րն է առևտրային հաշվառքի սարքի ապահովաքակցման կարգը

Մատակարարը պարտավոր է առևտրային հաշվառքի սարքի ապահովաքակցման, հերթական կամ արտահերթ ստուգաչափման ժամկետների մասին ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ գրավոր (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) ծանուցել բաժանորդին: Մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվառքի սարքը ապահովաքակցել առանց

բաժանորդին նախապես ծանուցելու, եթե ակնհայտորեն հայտնաբերել է, որ բաժանորդը բնական գազը սպառում է առևտրային հաշվառքի սարքի խախտմամբ: Նման դեպքում մատակարարը առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման մասին բաժանորդին պարտավոր է վերոնշյալ եղանակներով ծանուցել անմիջապես՝ առաջին իսկ հնարավորության դեպքում և ներկայացնել առևտրային հաշվառքի սարքի ակնհայտ խախտման իր հիմնավորումները:

11. Ի՞նչ իրավունքներ ունի բաժանորդն առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման ժամանակ

Բաժանորդն իրավունք ունի պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ՝ դրա ապահավաքակցումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ՝ նախապես փոխհամաձայնեցված ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մատակարարի կողմից այդ մասին գրավոր (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) ծանուցելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետում առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը կամ ստուգաչափմանը պատշաճ ձևով տեղեկացված բաժանորդի չներկայանալու դեպքում այդ աշխատանքներն իրականացվում են առանց բաժանորդի ներկայության:

12. Ու՛մ կողմից են կատարվում առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման հետ կապված ծախսերը

Առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման հետ կապված բոլոր ծախսերը կրում է մատակարարը:

Առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման հետ կապված բոլոր ծախսերը կրում է բաժանորդը, եթե չափազիտական մարմնի տված փորձագիտական եզրակացությամբ փաստվել է առևտրային հաշվառքի սարքի այնպիսի խախտում, երբ մատակարարված բնական գազի վերահաշվարկն իրականացվում է Կանոնների 4.13 կետի համաձայն:

Բաժանորդն առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման հետ կապված բոլոր ծախսերը կրում է նաև այն դեպքում, երբ բաժանորդի կողմից առևտրային հաշվառքի սարքի միջստուգաչափման ժամկետում մեկից ավելի անգամ առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման վերաբերյալ դիմումի ներկայացման արդյունքում չափազիտական մարմնի տված փորձագիտական եզրակացությամբ չի հաստատվել առևտրային հաշվառքի սարքի խախտում:

13. Ո՞րն է բաժանորդի սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք մուտք գործելու կարգը

Մատակարարի լիազոր ներկայացուցիչները կարող են մուտք գործել բաժանորդի (օգտագործողի) տարածք միայն անձի լիազորությունները հավաստող լուսանկարով վկայականի ներկայացման դեպքում:

Գազասպառման և ներշնչային համակարգերում վթարի դեպքում ապահովվում է շուրջօրյա մուտք:

14. Ո՞ր դեպքում մատակարարն իրավունք ունի ընդհատել կամ դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը

Մատակարարն իրավունք ունի ընդհատել կամ դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝

1) ֆորս մաժորի (անհաղթահարելի ուժ) դեպքում, եթե անհրաժեշտ է արագ վերացնել ֆորս մաժորի ազդեցությունը կամ հետևանքները.

2) վթարները կամ վթարային իրավիճակները վերացնելու կամ կանխելու համար անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու դեպքերում.

3) գազամատակարարման ցանցում պլանային աշխատանքներ կատարելու կամ նոր բաժանորդների գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացնելու դեպքում.

4) ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման նպատակով մատակարարի (լիազորված անձի) ներկայացուցչի մուտքը բնակիչ-բաժանորդի ներտնային գազասպառման համակարգի տեղակայման տարածք խոչընդոտելու դեպքում.

5) մատակարարված (վերահաշվարկված) գազի կամ ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության համար չվճարելու դեպքում.

6) խցափակված գազօգտագործող սարքավորման սնուցումը բաժանորդի կողմից ինքնակամ վերականգնելու դեպքում.

7) գազօգտագործող սարքավորման մուտքային գծի փականների կնիքը բաժանորդի կողմից առանց մատակարարին պատշաճ ձևով տեղյակ պահելու հանելու դեպքում.

8) եթե բնակիչ-բաժանորդը մեկ տարուց ավելի բնական գազ չի սպառել, և այդ ընթացքում վերջինիս ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում չի իրականացվել.

9) օրենքով կամ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կնքված պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

Մատակարարն իրավունք ունի դադարեցնել կազմակերպության գազամատակարարումը, եթե վերջինս խոչընդոտել է մատակարարի (լիազորված անձի) ներկայացուցչի մուտքը իր գազասպառման համակարգի տեղակայման տարածք՝ լիազորությունները հավաստող ծառայողական վկայական (լուսանկարով) ներկայացնելու և կազմակերպության քարտի համարը հայտնելու դեպքում:

Ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից և վերջիններիս գործադրած ջանքերից անկախ՝ խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողությունները: Արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնաձին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգու-

թյունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները:

15. Ո՞րն է մատակարարված գազի հաշվառման և վճարման կարգը: Ի՞նչ պարտականություններ ունեն մատակարարը և բաժանորդը

Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին կամ հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում: Բնակիչ-բաժանորդներն իրավունք ունեն մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

Մատակարարը պարտավոր է՝

1) մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը, հանրային իրազեկման ավելի մեծ դաշտ ունեցող առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով՝ երկու անգամ, ժամը 18:00-ից 20:00-ն և 20:00-ից 23:00-ն ընկած ժամանակահատվածներում, հայտարարել նախորդ հաշվարկային ամսում բնակիչ-բաժանորդներին մատակարարված գազի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղադրելու օրվա մասին.

2) մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, փոստային բաժանմունքների համապատասխան սպասարկման կետերում տեղադրել տեղեկատվություն՝ նախորդ հաշվարկային ամսում բնակիչ-բաժանորդներին մատակարարված գազի քանակի և արժեքի մասին.

3) նախորդ հաշվարկային ամսում մատակարարված (վերահաշվարկված) գազի դիմաց բնակիչ-բաժանորդներին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում ապահովել տեղեկատվության առկայությունը՝ բաժանորդի

անունը, ազգանունը, հասցեն, քարտի համարը, հաշվարկային ամիսը, առևտրային հաշվառքի սարքի նախորդ և վերջին ցուցմունքները, հաշվարկային ամսում մատակարարված (վերահաշվարկված) գազի քանակը, սակագինը և արժեքը, նախորդ տարվա նույն ամսում մատակարարված (վերահաշվարկված) գազի քանակը, պարտքի մնացորդը հաշվարկային ամսվա սկզբին և վերջին և վճարման ամսաթիվը.

4) բնակիչ-բաժանորդի գրավոր դիմումի դեպքում, դիմումը ստանալուն հաջորդող հաշվարկային ամսվանից սկսած՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը, վերջինիս նախընտրած եղանակով (փոստով՝ գրավոր կամ էլեկտրոնային փոստով) ծանուցել նախորդ հաշվարկային ամսում մատակարարված գազի քանակի և արժեքի հաշվարկման ընթացքում օգտագործված բոլոր ցուցանիշների մասին: Ծանուցումը փոստով առաքելու համար վճարում է բնակիչ-բաժանորդը, իսկ ծանուցումն էլեկտրոնային փոստով իրականացվում է անվճար: Փոստային առաքման վճարը ներառվում է հաշվարկային (վճարման) փաստաթղթում առանձին տողով և ավելացվում է ծախսված բնական գազի արժեքին.

5) հնարավորություն ընձեռել բաժանորդին իր վերկայքի միջոցով՝ անվճար, էլեկտրոնային եղանակով ծանոթանալ 3-րդ կետում նշված տեղեկատվությանը՝ առնվազն վերջին մեկ տարվա համար:

Բնակիչ-բաժանորդը նախորդ հաշվարկային ամսում մատակարարված (վերահաշվարկված) գազի արժեքի համար պարտավոր է վճարել նախորդ հաշվարկային ամսում բնակիչ-բաժանորդներին մատակարարված (վերահաշվարկված) գազի քանակի և արժեքի մասին տեղեկատվության հրապարակումից հետո 7 օրվա ընթացքում:

16. Որո՞նք են գազամատակարարման ընդհատման պայմանները

Մատակարարը պարտավոր է նվազագույնի հասցնել յուրաքանչյուր բաժանորդի գազամատակարարման ընդհատումների թիվը և ընդհատման տևողությունը, ընդ որում, ընդհատումների թիվն օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցի 4-ը, իսկ յուրաքանչյուր ընդհատման առավելագույն տևողությունը՝ 36 ժամը, բացառությամբ, եթե ընդհատումը ֆորս մաժորի հետևանք է:

Չմեռային ժամանակահատվածում (նոյեմբերի 1-ից մինչև մարտի 15-ը) բնակիչ-բաժանորդների գազամատակարարումը չպետք է ընդհատվի գազամատակարարման ցանցում պլանային աշխատանքներ կատարելու պատճառով:

Նոր բաժանորդների միացման պատճառով բաժանորդների գազամատակարարման ընդհատումները չեն ներառվում ընդհատումների հաշվառվող քանակի մեջ:

Ջերմային էլեկտրակայանների և տեխնոլոգիական անընդհատ ցիկլ ունեցող բաժանորդների համար այդ ցուցանիշները կարող են սահմանվել պայմանագրով:

17. Ի՞նչ պարտականություն ունի բաժանորդը գազասպառման համակարգ ներառող տարածքը վարձակալության հանձնելու, վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում

Բաժանորդը գազասպառման համակարգ ներառող տարածքը վարձակալության հանձնելու դեպքում պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել մատակարարին՝ վարձակալին արտահերթ հրահանգավորման համար:

Բաժանորդն իր սեփականությունը հանդիսացող գազասպառման համակարգ պարունակող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում պարտավոր է դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, գազամատակարարումը դադարեցնելու և պայմանագիրը լուծելու համար: Նշված դեպքում մատակարարը պարտավոր է նախքան պայմանագիրը լուծելը ստուգաչափել առևտրային հաշվառքի սարքը Կանոններով սահմանված կարգով և բաժանորդի հետ վերջնահաշվարկը կատարել՝ հաշվի առնելով նաև ստուգաչափման արդյունքները:

18. Ի՞նչ իրավունքներ ունի մատակարարը բաժանորդի կողմից վճարում չկատարելու դեպքում

Սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը՝ առնվազն 3 օր առաջ հեռուստատեսությամբ կամ բնակիչ-բաժանորդներին հասու այլ ձևերով (հայտարարություն փակցնելով շքամուտքերում, փոստային բաժանմունքներում և այլն) զգուշացնելուց հետո: Զգուշացումը հեռուստատեսությամբ պետք է իրականացվի հանրային իրազեկման ավելի մեծ դաշտ ունեցող առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով՝ երկու անգամ, 18:00-ից 20:00-ն և 20:00-ից 23:00-ն ընկած ժամանակահատվածներում: Մատակարարը բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը դադարեցնելուց անմիջապես առաջ պարտավոր է վերջինիս զգուշացնել:

Մատակարարը չպետք է դադարեցնի բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը, եթե վերջինս ներկայացրել է մատակարարի համար ընդունելի

պայմաններով վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմել է պարտքի մարման ժամանակացույց:

Եթե բնակիչ-բաժանորդը պարտքը չի մարում ըստ ժամանակացույցի, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել նրա գազամատակարարումը՝ սահմանված կարգով նախազգուշացնելուց հետո:

19. Ի՞նչ պարտականություններ ունի «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը բաժանորդի կողմից պարտքի վճարում կատարելու դեպքում

Բնակիչ-բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ մարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ հեռախոսով, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո մատակարարը պարտավոր է բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը վերսկսել հնարավորին կարճ ժամկետում՝ սակայն ոչ ուշ, քան 36 ժամը: Գազամատակարարումը վերսկսելուց առաջ մատակարարը կարող է տեղում ստուգել բնակիչ-բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը:

20. Ի՞նչ արտոնություններ են սահմանված մատակարարված գազի դիմաց վարձավճարի համար

Վարձավճարի համար արտոնություններ սահմանվում են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անձանց նկատմամբ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով: Նշված արտոնություններից օգտվելու համար

անհրաժեշտ է դիմել սոցիալական աջակցության տարածքային բաժին և հաշվառվել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում:

21. Ի՞նչ անել, երբ համաձայն չեք «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության ներկայացրած վճարման հաշիվների հետ

Հաշվարկային (վճարման) փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին գրավոր ծանուցում է մյուս կողմին: Ծանուցումն ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում կողմն անհամաձայնության դեպքում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով:

Սխալի փաստը հաստատվելու դեպքում մատակարարը սխալ հաշվարկված բնական գազի արժեքը հաշվի է առնում (նվազեցնում կամ ավելացնում է) հաջորդ հաշվարկային ամսում բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում: Հաշվարկային (վճարման) փաստաթղթի վերաբերյալ տարաձայնությունների դեպքում մատակարարը չպետք է դադարեցնի բաժանորդի գազամատակարարումը, եթե վերջինս վճարել է մատակարարված բնական գազի՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իր կողմից սպառված բնական գազի վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին:

22. Ի՞նչ անել, երբ առևտրային հաշվառքի սարքի աշխատանքը թվում է կասկածելի

Առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության վերաբերյալ կասկածի դեպքում իրականացվում է առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափում: Առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափումը կարող է իրականացվել ինչպես բաժանորդի պահանջով, այնպես էլ մատակարարի նախաձեռնությամբ: Առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման դեպքում մատակարարը պարտավոր է առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումից ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում բաժանորդին ներկայացնել չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացության պատճենը: Մատակարարը պարտավոր է բաժանորդի կողմից առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման վերաբերյալ գրավոր պահանջ ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահավաքակցել առևտրային հաշվառքի սարքը:

23. Ինչպե՞ս բողոքարկել «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության գործողությունները

«Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության գործողության (անգործության) կամ որոշման դեմ բաժանորդները բողոք կարող են հասցեագրել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին կամ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին: Նշվածը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իրականացնում է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումը:

Հանձնաժողովն իրավասու է կազմակերպել քննարկումներ հանձնաժողովին ուղղված սպառողների հարցադրումների ու բողոքների, բնական գազի մատակարարման հետ կապված, քննարկումների արդյունքով կայացնելու որոշումներ և տալու պարզաբանումներ:

24. Ո՞ր դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանը կքննարկի հարցը և ո՞վ կարող է դիմել Պաշտպանին

Պաշտպանը բողոքի առկայության դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ քննարկում է հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը, եթե տեղեկություն կա մարդու իրավունքների կամ ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի հանրային նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք չեն կարող ինքնուրույն օգտագործել իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավական միջոցները:

Պաշտպանին դիմելու իրավունք ունի յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ:

Բողոքը պետք է Պաշտպանին ներկայացվի մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների կամ ազատությունների ենթադրյալ խախտման մասին: Բողոքը ներկայացվում է գրավոր կամ բանավոր ձևով:

Գրավոր՝ փոստով կամ Պաշտպանի աշխատակազմ դիմում անձամբ հանձնելով (ք. Երևան, Պուշկինի 56ա), էլեկտրոնային փոստով (ombuds@ombuds.am), Պաշտպանին

կամ նրա աշխատակազմի իրավասու ներկայացուցչին դիմումն առձեռն հանձնելով: Բանավոր՝ Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցչին անձամբ հայտնելով, աշխատակազմ գանգահարելով (+374 10 537651 կամ +374 43506116), անվճար 116 թեժ գծին զանգելով:

Պաշտպանին ներկայացվող բողոքների համար պետական տուրք չի գանձվում:

Բողոքը պետք է լինի ստորագրված՝ ներառելով բողոք ներկայացնող անձի ազգանունը, անունը, բնակության վայրը (հասցեն) կամ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը և հետադարձ կապի վերաբերյալ տվյալներ:

Բողոքն ստանալուց և հաշվառելուց անմիջապես հետո Պաշտպանի սահմանած կարգով իրականացվում է բողոքի ուսումնասիրություն, որի հիման վրա Պաշտպանը կայացնում է օրենքով նախատեսված որոշումներից մեկը:

Այն դեպքում, երբ դիմողի կողմից բարձրացված հարցը չի վկայում մարդու իրավունքների կամ ազատությունների զանգվածային խախտումների մասին, այլ կրում է անհատական բնույթ, Պաշտպանը բողոքը ներկայացնողի համաձայնությամբ կարող է քննարկման նպատակով փոխանցել այն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի քննարկմանը՝ պարբերաբար տեղեկանալով հարցի քննարկման ընթացքի մասին: